Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԵՐԵՎԱՆ - ՍՈՉԻ ՈՒՂԵՐԹԻ ՕԴԱՆԱՎԱՅԻՆ ԱՂԵՏԻ ԱՌԻԹՈՎ

Խոր վշտով տեղեկացանք Երևան-Սոչի ուղերթի օդանավի կործանման և բազմաթիվ զոհերի մասին: Սգում ենք այս մեծ ու անսպասելի կորուստը աղետից զոհվածների հարազատների և համայն մեր ժողովրդի հետ:

Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի՝ Մեր վշտակցությունն ենք բերում զոհվածների բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Աղոթում ենք առ Աստված, որ Իր երկնային բարձունքներում լույսերի մեջ ընդունի զոհվածների հոգիները և պարգևի երանական խաղաղություն: Հայցում ենք, որ Տերը Սուրբ Հոգու շնորհով համբերություն և մխիթարություն պարգևի հանգուցյալների հարազատներին՝ վերապրելու կորստյան վիշտը:

Մշտահունչ աղոթք և աստվածային օրհնություն աղետից զոհվածների հիշատակին: Ամեն:

Վշտակցությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
3 մայիսի 2006 թ.